

Hentchak :

ORGANE DU PARTI

REV. ARMÉNIEN

HENTCHAKISTE.

ՀՆՉԱԿ

ADRESSE

M. BELLART,

85, Peckham Rye

LONDON, S.E.

Angleterre.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Սրանով պաշտօնապէս յայտարարում ենք բոլոր Հնչակեան շրջանակներին և հայ հասարակութեան, 1) Թէ՛ ամեն կարգի ոճրադործութիւնների և հայ յեղափոխական դործի դէմ իրենց լարած սոսկալի դաւադրութեան պատճառով, Կոստանդնուպոլսէան շարքերից ընդմիջաւոր արտաքսւած են նախկին Վերակազմ. Հնչ. հերձաւորին պատկանող Ալէքսան Արզուման (Վահէ), Վահան Շահ-բեկ, Վահրամ Գրիգորեան, Կարապետ Փափագեան, պատ. Գարեգին Չիթճեան, Գեորգ վարդապետ Մարգուկէսեան, Գաղարոս Կալոյեան (Սուրէն Սուրէնեան), Օսրեհ Գոչեան, Մարտիրոս Տ. Յովհաննէսեան ու Բարդուղէան և իրենց տղիւթեամբ դրանց ձեռքին դործիք դարձած խմբակը:

2) Հնչակեան Կոստանդնուպոլսէան պատկանող անհատներ Հմայակ Խուշակեան, Սմբատ Ռոստիկեան (Սոգունկ) և Գրիգոր Գարիբեան (Հրաչեայ) արտաքսւած են առաջինների դաւադրութեան մասնակցելու համար:

3) Վերոյիշեալ խմբակի դաւադրական ձեռնարկը ամբողջովին երևան եկած լինելով, դեռ անցեալ դեկ. 5-ի ներքին շրջաբերականով յայտարարւած էր Արզումանի, Շահբեկի, և Գրիգորեանի Կոստ. Կենտ. Վրչ. անդամակցութիւնից արտաքսուածը, Հնչ Մասնաձիւղերի հետ որ և է յարաբերութիւն ունենալու, նա և կոստանդնուպոլսէան որ և է պաշտօն վարելու իրաւունքից զրկւած լինելը: Բայց օգտւելով այն հանգամանքից, որ Հնչ. միութեան ժամանակ Վ. Շահբեկեան և Վ. Գրիգորեան ևս ընդունւած էին Հնչակի իրաւատիրութեան ցանկի մէջ, որպէս նախկին Վեր. հերձաւորի ներկայացուցիչներ, յայտնի պառակտիչ Չիթճեանի դործակցութեամբ, իրենք իրենց կենտրոն թիւելով, սկսեցին իսկական «Հնչակ»ի հետ զուգընթացաբար մի կեղծ Հնչակ հրատարակել տարբեր հասցեով և A. Colbard կեղծանունով:

Յայտնելով այս բոլորը և գիտութիւն ընդհանուրի, զգուշացնում ենք մեր բոլոր ընկերներին և

հայ հասարակութեան՝ այդ կեղծ Հնչակի և յիշեալ դաւադիր և յեղ. դործը շահագործող խմբակի ամեն կարգի շահատակութիւնները:

ԴԻՄԱԿՆԵՐԸ ՊԱՏՈՒԵՑԱՆ

ԴԱՒԱԴԻՐՆԵՐԸ ԴՈՒՐՍ

Ոչ միայն նրանց համար, որոնք յատկապէս զբաղւում են հայ յեղափոխական գործերով, այլ և բոլոր այդ գործով հետաքրքրւողների համար էլ, այլ ևս արևի լոյսի պէս պարզ է, Թէ ինչ է եղած և է՛ վերի յայտարարութեան մէջ յիշւած տխրահռչակ խմբակի դերը յեղափոխական ասպարէզում: Միայն նրանց պակասում է այն, ինչ որ այժմ ամենատեսչած կերպով գտնուում է մեր ձեռքում: Մենք չպիտի թաղցնենք և ի՞նչու թաղցնենք սրանց իսկական նպատակը, որպէսզի հայ հասարակութիւնը աւելի խորը թափանցելով նրանց նողկալի դերի և միջին նպատակների խորքը՝ շտապէ օր առաջ այս տխրահռչակ հերոսների նկատմամբ, իրենց արժանի պատժի դատաւճիռը արձակել: Ո՛ւմ յայտնի չէ այն խանդավառ ոգևորութիւնը, որով մենք ձեռք էինք պարզում մեր կոստանդնուպոլսէան նախկին վեր. հերձաւորին: Մեզ ոգևորում էր յեղափոխական մարմինների միացման և միահամուռ ուժերով յեղափոխական ասպարէզը նետելու գաղափարը: Բայց ո՞վ կարող էր երևակայել Թէ հէնց այն վայրկեանին, երբ այդ անարգ խմբակը իւր մի ձեռքը իբր Թէ եղբայրաբար դէպի մեզ էր պարզում, այդ միջոյն վայրկեանին, միւս ձեռքով մի ոռոկալի դաւ էր պատրաստում, ոչ միայն մեզ, այլև ամբողջ հայ յեղափ. գործի դէմ:

Որքան որ վարպետորդի կերպով աշխատել էին այդ դաւադրութեան գրաւոր հետքերը կորցնել, որը մասամբ յաջողել էին, բայց և այնպէս մեր ձեռքը անցած գրաւոր վաւերացումներն էլ ամենապարզ կերպով ասպարէզանում են ոչ միայն մեր դէմ լարւած քսաճեղի դաւաճանութիւնները, այլև մեղնեցառաջ մի ուրիշ կոստանդնուպոլսէան հետ վարած բանակցութեան

միևնոյն նպատակը... Մենք այստեղ չպիտի մանենք նրանց ստոր մանրամասնութեանց մէջ, այդ, ինչպէս և նրանց հրատարակութիւնը, թողնում ենք մի ուրիշ անդամի, եթէ հարկադրւած կլինենք այդ տխուր պարտականութիւնը կատարելու, սակայն յիշեալ դժուարութիւնները կմնան մի մշտական նախադիմելու այդ հայախօս թրքերի համար:

Գրանք խեղճութիւն համարեցին, մեր թիւ 2-րդ ներքին շրջաբերականի քննիչ յանձնախմբի առաջարկը ջուրը ձգելու համար, չեղած, չլուծւած օյնեպազութիւններ խողալ, որ պատուեն քննութեան անողորմ մերկացումներէ: Բայց չգիտենք այդ ո՞րքան պիտի յաջողի իրենց... Յիշեալ խմբակի հաւաքական դաւադրութիւնը երևան դալուց առաջ, պակաս նշանակալից չէր դրանց անհատական սխրագործութիւնների յայտնութիւնները: Օրինակ, երբ երևան եկաւ Ալեքսան Արզումանի հազարաւոր ոսկիներ վասնելու և Միւնիր—Բէյից նրա և իր ընկերների թաշակ ստանալու խնդիրը, մենք պահանջեցինք, որ մեր պաշտօնակիցը հրապարակ դայ և հերքէ այս սոսկալի ամբաստանութիւնները: Մեր պատասխանը եղաւ, թէ դրամական ամբաստանութեանց չպէտք է հաւատար, իսկ Միւնիր Բէյի խնդիրը, Վահրամ Գրիգորեանի ասելով՝ «պատիւ կը բերէ անոր՝ Արզումանին, Գաշնակցականք նախանձէն կըսեն կոր»: Պատուելի Չեթմեան նմանապէս իւր մի շրջաբերականով վկայումէ թէ «այդ բանակցութեան (:) շնորհիւ անոր յաջողեցաւ Սուլթանէն իրատէ մը բերել տայ, որը կը պահէ շնչ. Առևս. (?) արխիւին մէջ»: Մենք դեռ չգիտենք այն շարժառիթները, որով Սուլթանը մի խումբ հայ յեղափոխականների (?) առատ թաշակով վարձատրելուց յետոյ, անոնց ցանկացած իրատէն էլ շնորհէ: Այն իրաւ է, որ Սուլթանը այդքան բարի տրամադրութիւն ունի դէպի «խռովարարներ», որքան աւելի զթառառ պիտի լինի դէպի իրա խաղաղ հպատակները: Իսկ եթէ այդ բոլորը այդպէս է, ուրեմն մի թիւրիւմացութեան հետեւանք պիտի համարել մեր 300,000 դիակները, կամ ուղղակի իրենք էին յանցաւորները, իրենց մարթութելու համար...: Բայց այդ բոլորը մնայ, իրողութիւնը այն է որ իրենց բերանով ապացուցումէ Արզուման Միւնիր—Բէյի պայմանախօսութիւնը: Կոյնպիսի մանաւաճապատ պատասխաններ ստացանք նաև Շահ-բիմանի մասնութեան, Գրիգորեանի դողութիւնների (որի բառակուսի ապացոյցը տւաւ կենտ. գանձարանի վերաբերմամբ իրա ընթացքով), և Փափազեանի դաւադրութիւնների մասին տւած մեր հարցերին: Փափազեանի մասին այժմ մենք կասենք, որ նա է բոլոր դաւերի և չարքների առանցքը:

Մենք տեսանք դաւադիրների միութեան նը-

պատակը, այդ ծրագիրը բաւական հին է, իրենց հանգուցեալ հօր՝ Արիիարեանի փափայած երազները, մանեւ յեղափոխական կազմակերպութեանց մէջ, նրանց կործանելու նպատակաւ: մի այսպիսի ծառայութեան համար սուլթանը ոչ թէ մէկ, այլ մի քանի իրատէներով պատրաստ է արտայայտել իրա երախտագիտութիւն:

Բայց ինչով է զեկավարել դրանց յեղափոխական տարրը, այդ էլ անհետաքրքիր չէ: «Մեռած, դիակ դարձած մարմնի երակներուն մէջ թաւմ արիւն մտցնելու և Արզումանի յամառութեան օգնութեամբ, գործը չհաղործողներէն փրկելու համար»: Այս հայեցակէտը բաւական խիստ քննադատելի է, բայց անցածը անցել է, որքան էլ որ այժմ յեղափոխական այրող հանգամանքները մեզ ստիպում են բացառապէս իրենցով չզբաղել, այնուամենայնիւ մենք անտես չենք առնի նաև մեր միջոցաւ ակնկալւած «մաքրագործումը»: Կարգէն սկսած է, որ մենք կկատարենք ամենաանողորմ կերպով, այլ ևս դաւադիրների, դաւաճանների դիմակը պատռելուց և նրանց ժողովրդի ցասումների նշաւակ դարձնելուց զատ, ինքներա էլ կհալածենք մինչև իսպառ մահացումը՝ այդ նորագոյն Մերութեանների...:

Այնպիսի մի երկու խօսք էլ դրանց դարչելի մտքերի անարգ արդիւնքը եղող կեղծ Հնչակի մասին աւելորդ չենք համարում: Չնայած որ մի շարք բարոյական և իրաւարանական ամուր կուսակներ ունինք մեր ոտքերի տակ, Անգլիական օրէնքով արգելելու համար այդ կեղծարարների հրատարակութիւնը, բայց գերադասեցինք այդ դատաւարութեան համար ծախսելիք գումարները յատկացնել Առևսակցութեանս բուն նպատակին, հայ յեղափոխական գործին, որով թուումէ թէ ջուրը ձգած պիտի լինենք նաև նրանց ծրագրի մի ուրիշ կէտը, այն է, եթէ կործանել չկարողացան, գոնէ զբաղեցնեն իրենցով և ջլատեն մեր բարոյական և նիւթական ուժերը: Իսկ դաւաճանների անարգ մտքի արտագրութիւնը յանձնելով հայ հասարակութեան դատաստանին, հաւատաշատ ենք այդ անհարազատ արտագրութեան ճակատագրական կերպով մահւան դատապարտելու վճռին:

“ Հ Ն 2 Ա Կ ” Ի

15. ԱՄԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Այսօր բոլորեց իւր շրջանը 1902 տարին: Այսօր էլ լրացաւ «Հնչակ»ի 15 - ամեակը: «Հնչակ» էր, որ ծնունդ տուեց մի հզօր Առևսակցութեան, նա էր, որ ծնունդ տուեց առաջին

անգամ Հայ Յեղափոխութեան, որ հիմը դրեց Հայ Ազատագրութեան զաղափարով տողորում մի կազմակերպութեան լայնածաւալ մարմին, որ իւր փառաւոր գործունէութեամբ, իւր մարտնչող յեղափոխական խիզախ ոգով Հայկական հարցը ոչ միայն այրւող խնդիրների կարգը դրեց եւրոպական դիւանագիտութեան և մամուլի մէջ, այլ և իւր գործունէութեան եղանակով, իւր ապստամբական ծրագիրներով, իւր ընդհանուր ուղղութեամբ հայ ժողովրդի յոյսերի իրականացման հրաշքը և կարեւոր ազդակը եղաւ:

Այստեղ մտադիր չենք Հնչակեան Առաքելացութեան անցեալի, արածների և գործունէութեան մանրամասն հաշիւը ներկայացնել մեր ընթերցողներին. ոչ էլ դիտաւորութիւն ունինք թուրքիկ ակնարկ ձգելով անցեալի վրայ՝ գէթ համառօտ համագումարի ուրուագիծը դնել հասարակութեան առաջ: Այդ բոլորը կաններ մենք ի հարկին՝ ապագայում: Հայ ազգին, հայ ժողովրդին շատ լաւ ծանօթ է Հնչակեան Առաքելացութեան էութիւնը, նրա ոգին, ծրագիրը, նրա խաղաղած դերը և տուած արդիւնքները թշնամու նողկալի լուծը թօթափելի խնդրում: Թաւաղութեան «Հնչակ»ի տասնեակներորդ տարեշրջանը այսուհետեւ ևս՝ հաւատարիմ մնալով Առաքելացութեան ուղղութեան, հաւատարիմ մնալով մեր սկզբունքներին և ծրագրին՝ յարատեւ և անվճատ գործունէութեամբ պիտի ձգենք Առաքելացութեան նուիրական նպատակներն իրագործել և հայ ժողովրդին՝ դէպի Առաքելացութիւն տոճած՝ յոյսերն արգարացնել:

Վերախտաբար, ինչպէս անսովոր չէ ընդհանրապէս ամեն մի ընդարձակ և լայնածաւալ կազմակերպութեան՝ մանաւանդ յիդ. կազմակերպութեան՝ Առաքելացութեան շարքերում մօտակայ անցեալում ներքին խռովութիւններ և զբոսութիւններ սերմանուեցան մի խումբ չարամիտների և յեղափոխական փսիւս ասպարէզը շահագործողների ձեռքով, որոնք սպրդել էին Առաքելացութեան շարքերի մէջ դաւադրական անարգ ծրագրով, սակայն չարութեան թունաւոր խորհուրդները և մտքերը՝ ժամանակին երեւան դալով՝ դատապարտուեցան ու խափանուեցան: Անարգ պառակտիչները և խռովարարները, Առաքելացութեան մաքուր անուան վրայ ոտուէր ձգողները՝ դուրս չպրտուած վիճելով մեր շարքերից, առանց յետ կասելու մեր բուն նպատակից և գործունէութեան ընդգծած ծանապարհից՝ առաջ կերթանք աւելի ներդաշնակօրէն և համերաշխութեամբ՝ արհամարհելով բոլոր դաւադիրներին ու նրանց սարքած որոգայթները:

Դամանակը յղի է, և մենք պիտի դիտենանք այդ ժամանակը մեր իսկական նպատակների համար գործադրել: Վաղաքական հանգամանքները և արդի իրողութիւնները աւելի քան բարեյաջող և նպաստաւոր են ձեռնան, բռնութեան տակ հեծեծող հարստահարութեամբ ժողովուրդներին՝ իրենց արդար ձայնը լսել տալու համար: Մակեդոնական դիւցազնական փոքրութիւն ժողովրդի գեղեցիկ օրինակը մի փայլուն գրաւական թող վնի մեզ համար: Ագեորութեան և բարի նախանձի անհուն զգացումներ պիտի ներշնչէ մեր մէջ այդ հերոսական մի բուն ժողովուրդը, որ՝ մի ձեռքն սուր, միւս ձեռքին արգարութիւն և ճշմարտութիւնը բռնած՝ անասան հաւատքով պատերազմի դաշուն է նետուել՝ իւր բռնաբարութեամբ իրաւունքները վերականգնելու համար: Թշնամու բռնութեան շղթաները ջարդուփշուր անելու կռանները պատրաստոււմ են...: Տեսնենք: Թաւաղ, թէ կանգնած ենք մի հետաքրքիր և նշանակալից պատմական իրողութեան հանդէպ:

Սակայն ի՞նչ է մտածում հայ ժողովուրդը ներկայ հանգամանքների մասին: Այդ հանգամանքներն այնպէս են դասաւորուում, որ լաւատես լինելու իրաւունք ունինք: Դամանակը յղի է, հասուն և յուսալից, եթէ միայն հայ ժողովուրդը օգտուել դիտենայ նրանից: Օգտուենք քաղաքական ներկայ բարեյաջող պայմաններից՝ մեր Ս. Պատր պաշտպանելու համար: Մենք ևս պարտաւոր ենք կիսալուսնի նողկալի տիրապետութեաններէջ հառաջանքներ արձակող մեր կղբայրների և քոյրերի շղթաները ջախջախելու համար կռաններ պատրաստել: Այժմեան կրիտիքական բողէներում, երբ տաճկահայը դանակ անգամ չունի իր անձը, իւր կնոջ և ընտանիքի պատիւը պաշտպանելու թող հայ փարթամ գրամատէրը իւր անձնական գծուծ շահերին գոհացում տալով, իւր փառաշուք տարաւանքում մեղի ու տուալտ կեանք անցկացնելով հանդերձ՝ սթափուի մի վարկեան ու հասկանայ իւր պարտքը: Օհնք է հարկաւոր, թէ իւր արդար Պատր պաշտպանելու և թէ հայ անպառաշտան ժողովրդի սովորական խողիտղանքների առաջն առնելու: Առաջ ժողովրդի տրամադրութիւնը մեզ քաջ յայտնի է ամեն վայրկեան պատրաստ է նա թշնամու գնդակի դէմ դնալու: Մնում է, որ հայ հարուստն էլ զգայ իւր անխուսափելի պարտականութիւնը: Հաւանական է, որ եւրոպական ընդհանուր կ'ոնջեւրէնցն անխուսափելի դառնայ մօտակայ ապագայում: Ահա՛ թանկագին և ամենայարմար բողէն, մեր ոտնակոխ եղած իրաւունքները Մեծ Պետութիւններին ծանաչել տալու:

Դամանակ է սխալուելու, հայ ժողովուրդ: Բնդարմացնող հակաշրջումն - ունակցիան կործանուել է, վերջնական արացին պէտք է տալ նրան միայն: Բաւական է, որքան կասկածանքով ու վեհերոտութեամբ նայեցինք մեր շուրջը՝ լուրջ և խեղախ քայլեր անելու փոխարէն: Մի կողմը պէտք է նետել յոռետեսների բարոյաժ գատապարտելի մտքերը, տարակոյսներով լի մտմուռները: Տաճկահայկական ժողովրդի Ազատագրութեան վառ յոյսերով լցուած՝ նոյն եռանդով և յարատեւութեամբ պիտի շարունակենք մեր սկսած արդար և Ս. Գործը:

Հնչ. Կուսակցութիւնը, որ պատմութեան մէջ այնքան փայլուն և նշանաւոր էջեր է գրաւել՝ տառապեալ հայ ժողովրդի արդար Գատի պաշտպանութեան գործում՝ իւր այդ փառաւոր անցեալը զօրավիգ ունենալով՝ միշտ լի յուսով և հաւատքով դէպի ապագան ևս, անշեղ ու անյողդողդ առաջ պիտի տանի իւր սկսած վսեմ Գործը: Այսպիսի յոյսներում խիստ մխիթարական և խրախուսական է մեզ համար հայ ժողովրդի դէպի Կուսակցութիւնն տաճած վստահութեան զգացումը, այն ժողովրդի, որ ակնհատես է եղել Հնչ. զինւորի սիրադործութեան և նրանից շատ բան է սպասում նաև ապագայում:

Վստահութեան վաստակած այդ բուէն է ահա, որ մեզ մղում է աւելի բուռն, աւելի անյողդողդ քայլերով դիմելու մեր նուիրական կէտ նպատակին:

ԳՆՈՒՆԱԳԻՆ ԲՈՂԷ.

Օ՛, թողէք խնդրեմ, ի՞նչու կաշկանդել իմ ազատ ու հէգ մտորող հոգին. Ա՛խ, ի՞նչու կուղէք թւերըս կապել, Հաստ շղթայ ձգել իմ գգայուն սրտին:

Անբիծ արցունքով ես ոռոգեցի
Վաղաժամ տխուր բնարիս լարեր.
Գեղ բնութիւնը ձեզ նկարեցի,
Ներքէ իջեցրի լուսին ու աստղեր...:

Ես հայրենիքիս վերքը երգեցի,
Գլխիս փշապատ պսակ հիւսեցի,
Անյոյս բանւորի վիշտը պատմեցի,
Խնդացիք վերաս ու խենթ կանչեցիք:

Ես միշտ կը երգեմ! բռնի կաշկանդել
Ո՛չ, դուք չէք կարող իմ ազատ հոգին,
Ձե՛ք կարող երբէ՛ք թւերս կապել,
Հաստ շղթայ ձգել իմ գգայուն սրտին:

* * *

Ուրախ երգեր ի՞նչպէս երգեմ
Ես բնարով վշտալից.

Սէր, խնդութիւն ի՞նչպէս հիւսեմ
Իմ սգաւոր լարերից:

Հայրենիքից թռչնակ եկաւ
Արիւն հոսող վերքերով,
Նա բնարիս վերայ նստաւ
Ազատ օրեր տենչալով...:

Տխուր ձայնով նա երգ երգեց,
Մի երգ անյոյս, դառնալից,
Լարի վերայ արցունք թափեց,
Արիւն—արցունք վերքերից

Այն օրւանից ի՞նչպէս հրճեմ
Ես բնարով վշտալից,
Սէր, խնդութիւն ի՞նչպէս հիւսեմ,
Արնաշաղախ լարերից:

1902 թ. ՕՐ. ԲԵՆԱՐԻԿ

ՊԱՐՍԿԱԹՐԳԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒՄ

Դարերից ի վեր ջուլամերիկի ազատաշունչ լեռներում ապրում է բաջ և նահապետական մի ժողովուրդ, որը՝ չը նայած թիւրք կառավարութեան բոլոր բռնակալական ձգտումներին, կարողացել է մինչև այժմ պահպանել իւր կիսանկախութիւնը և վառ պահել հայրենի լեռներում ազատութեան սուրբ ու փրկարար ոգին: Զուլամերիկը, նման Զէյթունի, իւր վիթխարի լեռներով, անանցանելի կիրճերով և բաջ ու պատերազմասէր ժողովուրդով թիւրք կառավարութեան կողմից միշտ նկատուել է որպէս վտանգաւոր և սպառնալից մի կէտ. և նա ամեն կերպ աշխատել է ընկճել ու քայքայել ազատասէր ու բաջարի լեռնցիների այդ բոյնը, բայց միշտ անաջող: Զուլամերիկը մի բանի անգամ ինքնաբերել է կանոնաւոր պաշարման թիւրք զօրքերի և քրդերի կողմից, և ամեն անգամ լեռնցի ասորին, զէնքը ձեռքին, գիմաւորել է նրանց և արինահեղ կռիւներից յետոյ կարողացել է յետ մղել և արտաքսել իրենց գաւառի սահմաններից: Այդպիսի մի երևոյթ Տաճկահայաստանի ամենահայաշատ նահանգներից մէկում—Վասպուրականում, վերին աստիճան մխիթարական է ... Զուլամերիկ լեռնազաւոր գտնւում է Վասպուրականի հարաւային մասում, պարսկական սահմանից մի օրուայ հեռաւորութեան վրայ: Ազգաբնակչութիւնը բաղկացած է նեստորական ասորիներից և փոքր թւով հայերից: Ժողովրդի կրօնաբաղադական պետն է պատրիարք Մար Շիմոնը, որը մի առոյգ, պատերազմասէր և զէնքի ծերունի է և նստում է Կոչանիս աւանում: Առաւմարում է նա իւր ժողովուրդը մէլիքների կամ գիւղապետների միջոցով, որոնք միեւնոյն ժամանակ հանդիսանում են ազգաբնակչութեան կուռղ ոյժերի առաջնորդները: Ամբողջ ժողովուրդը զինուած է մարթինի հրացանով: Ինչպէս ասում են Մար Շիմոնը կուի ժամանակ զէնքի տակ կարող է դնել Զուլամերիկի և յարակից գաւառներից 30-40 հազար կուռղ ասորիներ, որոնք՝ ամրացած լինելով Զուլամերիկի անմատչելի լեռներում՝ կարելու ոյժ են ներկայացնում: Լեռնցի ասորիները վերին աստիճանի վրէժխնդիր են: Քրդերի աւազակութիւնները զսպելու և նրանց պատժելու համար ասորիները դիմում են ամենարեպրեսիվ

միջոցներ: Այդպէս վերջերս՝ արիւնայեղ մի դէպք տեղի ունեցաւ լեռնցի ասորիներէ և Շամշերանի քրդերի մէջ: Քրդերը մեծ թուով գիշերով յարձակուաւ են ասորական մի գիւղի վրայ և թալանում մի քանի տներ: Կատաղած ասորիները, դէպքից մի քանի օր յետոյ հաւաքելով, իրենց մելիքի առաջնորդութեամբ յարձակուաւ են հարեան քրդերի 2 գիւղերի վրայ, սպանում են 25 քիւրդ, իսպառ քանդում են այդ գիւղերը և հարուստ աւարով վերադառնում են իրենց տեղերը: Վերջերս այդ կողմերում իւր վրէժխնդրութեամբ մեծ հուշակ է ստացել Սուրօ անուանով մի ասորի: Մի անգամ նրան ճաշապարհին հանդիպում են մի խումբ քրդեր և ուզում են պոկել: Սուրին դիմադրում է. զայրացած քրդերը կտրում են նրա երկու ախանջները և քաց թողնում: Այդ դէպքը խորապէս ազդում է Սուրօի վրակ և նա ուխտում է վրէժխնդիր լինել: Վերադառնալով գիւղ՝ հաւաքում է մի քանի ընկերներ և սկսում է ամենայն եռանդով յետամուտ լինել քրդերին: Պատահած քրդերին նա սկսում է անխնայ կերպով մօրթել և իւր անգթութեամբ մեծ սարսափ է գցում քիւրդ ցեղերի վրայ: Կարճ միջոցում միայն ինքը Սուրօն կարողանում է սպանել 40 ի չափ քրդեր:

Ի նկատի ունենալով այն հանգամանքները, որ ջուլամերիկը իւր կտրիճ լեռնցիներով ու աշխարհադրական դիրքով մեծ նշանակութիւն ունի թրքահայատակ աղբերի ազատագրութեան խնդրի տեսակէտից, ես ուրիշ անգամ կ'աշխատեմ աւելի մանրամասնօրէն գրել այդ լեռնագաւառի և նրա ժողովուրդի մասին:

* * *

Քրդական ընդհարումները պարսկա-թրքական սահմանագծի վրայ գրեթէ միշտ անպակաս են: Մօտերքս ամբողջ երկու օր ճարայում արիւնայեղ կռիւներ էին տեղի ունենում Մարդիկցի և Շիկուկ ցեղերի մէջ: Երկու կողմից էլ կան մեծ թուով սպանուածներ ու վիրաւորեալներ: Մարդիկցիների կողմից սպանուած է նոյնպէս Շարաֆի եղբայրը, որը մի քանի ամիս առաջ այնքան ճարպիկութեամբ փախել է պարսիկ ձիաւորների ձեռքից: Մարքուի, Զիւանլի, Մաւանլի և այլ քրդական ցեղերը բաժանուած են երկու կուսակցութիւնների և առաջնորդ ունենալով տեղական խաներին ամբողջ երկու ամիս է որ ընդհարման մէջ են:

Ինչպէս տեղեկանում ենք հաստատ աղբիւրներից՝ մօտերքս Վասպուրականում ապրող շատ Բակուբեան ասորիներ, ինչպէս մեծ թուով հայեր՝ թիւրք կառավարութեան բռնութիւններից պաշտպանուելու համար դիմել են Վանի և Ռուսաց հիւպատոսին և ցանկութիւն յայտնել՝ որ իրենք օրթոդոքս եկեղեցւոյ գիւղը ընդունուին: Հիւպատոսը՝ համաձայնելով՝ դիմում է Ռուսի այդտեղի Ռուսաց հոգեւոր միստիային և քահանաներ պահանջում, Վասպուրականի նորագործ հայերին և ասորիներին Ռուս եկեղեցւոյ գիւղը ընդունելու: Սոյն նոյեմբերի 24 ին Ռուսից Վան մեկնեցին զապթիաների և Վանի Ռուսաց հիւպատոսի կալմաների ուղեկցութեամբ չորս Ռուս քահանաներ: Միայն Ռուսները չեն, որ շտապում են Հայաստան. այնտեղ արգէն վաղուց է, որ վիտում են անթիւ կաթոլիկ, բողոքական և այլն հոգեւորականներ, որոնք՝ օգտուելով հայերի անել գրութիւնից և դժբաղդու-

թիւնից, մեծ մեծ խուտուճներ բերանները առած՝ ջրատում են մեր ազգային ոյժերը, անդամահատում մեր մարմինը և այդպիսով, եթէ ոչ աւելի գոնէ հաւասար չափով, թիւրք կառավարութեան հետ վնասում են և բայբայում մեր հայրենիքը:

Mars

Յ Ա Ն Յ Ա Ի Ո Ր Կ Ո Մ Պ Ր Ո Մ Ի Ս Ն Ե Ր

Կար ժամանակ, և այդ ժամանակը շատ հեռու է, երբ բուռն եռանդով և հայրենասիրական առերևութային ամենանկեղծ ոգեւորութեամբ քարոզներ էին կարդում, երիտասարդութեան, հասարակութեան, գրականական խաւերում, թէ հայերը Տաճկոստանում շատ և շատ բախտաւոր, ապահով են և կը լինին Ինչպէս կարելի է տաճիկ նահապետական, ասիական ժողովուրդներին յատուկ անկեղծութիւնը, սքաւառացութիւնը միւս ազգերի հետ համեմատել: Տաճիկը, այսպէս ասած, ծառի ձիւղերն է կոտորում, ոչնչացնում, է՛հ, ի՞նչ վնաս, նոր ձիւղեր կաճին, նոր պտուղներ կը տան, գլխաւոր հարցը նրանումն է, արմատը անվնաս, անվթար է մնում. մինչդեռ, օրինակ, Ռուսը ծառի արմատն է ոչնչացնում, ազգային նուիրական յատկութիւնները բնաջինջ անում, այլասեռում, ձուլում իւր հետ: Ո՛ւր տաճիկը, ո՛ւր միւսը:

Բերում էին շատ ծամծամ, օրինակներ, եթէ քիւրդը մի փաշայ կովդալուէ, խոտդ հրդեհ է ձգում, գոմէշ գողանում, մեծ հոգս և զրկանք չէ, միւսը կը վաստակես, նորից կ'աշխատես, նոր քրտինք կը թափես: Տաճիկը հային Սահմանադրութիւն, Պատրիարքութիւն շնորհեց, կրօնի ազատութեանը, դպրոցների ձեռնամուխ չէ լինում, իսկ այդ դպրոցներում են կրթում, սնում հայ ազգի ապագայ յոյսը՝ երիտասարդութիւնը: ազգային գործիչները, որոնք, այնուհետեւ, անբռնազբօսի կրթութեան, ազատ դաստիարակութեան շնորհով հրաշքներ կը գործեն ժողովրդի ներքին վերածնութեան, բարեփոխութեան հարցերում, և այն և այն գեղեցիկ դարձուածներ, ողանչելի իմաստականութիւններ, խորին խիւրհուրդաւոր զօրեղ պատճառաբանութիւններ, որոնցով կամենում էին մէկ կողմից յեղափոխականների «ազգակործան» ընթացքը դատապարտել, ու միւս կողմից հայրենասերի ու անկեղծ ազգասէրի դիմակ դրած, ուղիղ, անվնաս և իսկական ռահահոգ ձեւանալ:

Այս մի ընդհանուր ուղղութիւն էր, ընդհանուր ոգի էր, որ տիրապետում էր հայ ժողովրդի շատ և շատ շրջաններում, կրթութեամբ դասակարգի զանազան խաւերում: Այս ուղղութեան հետեւողներ և թունդ պաշտպաններ դեռ ևս բազմաթիւ են, գրականութեան, մամուլի և, մանաւանդ, հոգեւորականութեան ներկայացուցիչների մէջ: Դեռ մի կողմը թողնենք վերոյիշեալ համեմատութիւնը, բազ համոզուած լինելով, որ թուրք նաւոր օձերի վնասը նոյնն է, սե գոյնի լինի, թէ խայտաբղետ Ինչ է ցոյց տալիս իրականութիւնը տաճկահայերի վերաբերմամբ: Դեռ շատ դարեր չեն անցել և մեր առաջն է դառն, զարհուրելի իրականութիւնը: Երկու և կէս միլիօն ժողովրդի թիւը որքան է ներկայումս: Այս մի տեսուր սարսափելի իրողութիւն է, որ անկեղծ, ճշմարիտ հայրենասերին շանթահար կանէ:

Կամովին, կուրգուրայն այլասեռումն է, սերճատուծիւնն արդեօք պատճառը, նման ֆրանսիական ամենաքաղաքակիրթ և բարեխաղաղութեան, որի անկեղծ զաւակները, այդ սոսկալի իրականութեան ականատես, պաշտօնատեան տրիբուններից արտասուքի ու յուսահատութեան զեղումներ են թափում: Այս, այդ տաճկաց նենգ բաղադրանութեան հրեշտակը ծրագրին է՝ կոտորել, մորթել, բռնաբարել, յափշտակել և բռնի խլամաջներ. այդ տաճիկ արիւննուշտ, բարձր և ստորին պաշտօնեաների գաղանային աւերումներ են, որոնք գարեբի ընթացքում ճնշել, խեղդել, ստրկացրել և անհատական վճռականութեանից զրկել են առանց այն էլ տառնեակ գարեբով հարստահարուած, շահագործութեան ենթակայ ժողովուրդին: Յեղափոխութիւնը լաւ պատրուակ էր Համիդի ձեռքին, լաւ մատի փաթածան էր նրա ոճրագործ ձեռքերին. և նա, խանդավառ բերկրանքով օգտուելով այդ գեղեցիկ հանգամանքից, ծածուկ և մեպատիժ իւր կատարած արտասովոր ոճրագործութիւններին աւելացրեց չտեսնուած, չլուծուած իւր եղեռնագործութիւնները, 300000 անմեղ զոհերի արիւնով ներկելով Հայաստանի լեռներն ու դաշտերը: Ինչով են հապա բացատրում Տաճկահայերի նուազիր, ինչով են բացատրում աղագործական, պատմական և բնախօսական այդ արտասովոր երեւոյթը մեր խելօք, պահպանողական, խոհեմ, բայց յանձնապաստան հայրենասէրները: Ի՞նչի մէջ պիտի կայանայ հայ ժողովուրդի բարօրութիւնը և երջանկութիւնը նոյն իսկ առանց յեղափոխութեան բռնկման, եթէ ժողովուրդը այս խորհրդաւոր ոչնչացման, սպառման և բնաջինջ լինելուն է ենթակայ:

Կատարուեցան Ելքի Գեօշքի Մեծ Ոճրագործի եղեռնագործութիւնները, և ահա նոյն տեսակ խելօքների լէգէոնները՝ փոխանակ կատաղութեան և վրէժխնդրութեան արդար ու բուռն զգացմունքով համակուելու՝ սկսան յեղափոխականներին մեղադրել, ներանց գլխին հասցնել իրենց մուրճերի հարուածները: Ի՞նչ, սկսեցին սովորական յանցաւոր իմաստակութիւնները և կոմպրոմիսներ անելու այլանդակ զառանցումները: Անիծեալ լինին այդ յեղափոխականները, Սուլթանի աբդար զայրոյթը գրգռեցին: Ի՞նչ անենք, նորէն աշխատինք, բան մը մտտանք, կարելի է խաթրըն առնենք Կորին Մեծութեան: Ի՞նչ, իզուր այսբան արիւն թափուեցաւ, Զէյթունի ապստամբութիւնն այսպէս վերջացաւ, Սասունի եղերեբութիւնն ողբալի փախճան ունեցաւ, էլ ոչինչ չի դուրս գալ յեղափոխութեանից, ձեռքներս ծալենք, միջին ճանապարհ բռնենք, խաթրը առնենք վէհախառ Սուլթանի, մաղթանքներ կատարելու է անոր արեւշատութեան և փառք թագաւորելու համար... Եւ սկսեց հայ հոգեւորականութիւնը իւր մաղթանքները և բուրվառի խնկարկութեան ամպերը բարձրացնել հայ ազատ եկեղեցու գմբէթների ներքոյ, և սկսեց հրեշաւոր և ոճրագործ կոմպրոմիսների անարդ հեղեղը հայ գրագէտը, հայ մտաւոր պոռնիկ, կաշառուած գրիչը... և սկսեցին գաղանի յիշին ալեւուներ կարգալու եղեռնագործ պատրաստութիւններ՝ անկեղծ հայրենասէրի, խոհեմ բաղաբաղէտի անօրինակութիւնն ունենալ ճգնելով: Եւ այս բոլորը—300000 հազար անմեղ արիւնով Հայաստանի սրտի մէջ լծեց

կաղմելուց յետոյ:

Անցել են այսպիսի պառաւական առասպելների, հրեշտակ կոմպրոմիսների ժամանակները անգարծ և անհետ: Ահաւոր խրամատը, անյատակ վիճը և անջըրպետը Մեծ Ոճրագործի և հայ ժողովուրդի միջև բացուած են արգէն անդառնալի, անուղղելի կերպով: Ո՛չ մի խոհեմ բաղաբաղէտութիւն, ո՛չ մի անմիտ կոմպրոմիս, ո՛չ մի խաթր առնելու յանցաւոր դիտաւորութիւն չեն կարող սանձահարել արիւնն աչքերը կոխած արիւննուշտ գաղանին՝ իւր շահատապնութիւնները, եղեռնագործութիւնները չհարունակելու համար: Այսպէս մտածողները շարունակ մէջ են բերում իրենց ծածկած պատճառաբանութիւնները թէ հայ յեղափոխութիւնը մի արհեստական երեւոյթ էր, որ մի քանի տաքազուխ երիտասարդներ բռնի, արհեստական կերպով կամեցան պատուաստել հայ հողի վրայ՝ ժողովուրդի և թշուառութեան կործանման նախապատճառներ գործան:

Արհեստական կերպով չէ կարող ո՛չ մի պատմական երեւոյթ, ո՛չ մի պատմական խոշոր յեղափոխումն առաջ գալ: Գա հակառակ է ոչ միայն պատմութեան, յառաջդիմութեան և փոփոխութեան սկզբունքին այլ և հասարակ, առողջ դատողութեան: Մի Ռոբեսպիէր, մի Միրաբո, մի Շէնիէ, մի Զօֆէ և միւս ֆրանսիական ազգի բարեբարները 18-րդ դարի արտասովոր երեւոյթը չէին կարող ստեղծել, եթէ ժողովուրդի մէջ պատրաստի հող չլինէր, եթէ տիրապետող խառնուակ ուժի մի անտանելի ճնշման տապալիչ բեռն ծանրութեան տակ ժողովուրդը հրաբխային արշաւի ժաման չբռնկէր և տակնուվրայ չանէր միապետութեան սպանիչ, կորստաբեր իշխանութիւնը: Անհատները շեղակարում են, բազմութիւնը, զանգուածը գործադրում է Ի՞նչ «տաքաբլուխ» հայ՝ ջահէլջուներ» կարող էին 5000 մարդոց սրբազան խումբը բարկութեան և արդար զայրոյթի, կատաղութեան բուռն արտայայտութեամբ շինու, արհեստական կերպով հրահրել եթէ այդ խնկելի բազմութեան սրտերում հարստահարութեան, անխիղճ շահագործութեան անսանձ զգացմունքները, սրտմտութեան խորին տանջութեան զանգուածները իբրեւ հրաբուխ մթերուած, ամբարուած չլինէին, պատեհ պայագային պայթելու, բռնկուելու համար: Ահա՛ այդ դարեւոր ճնշման եռուն, բորբոքուն զանգուածներն էին որ, բնականաբար, այլ ևս անկարող լինելով դիմադրել իրենց սեղմող գերմարդկային զարհուրելի ոյժին, պայթեցին, արտաքս բռնկեցին իբրեւ հրաբխային արտափոխումներ Զէյթունի, Սասունի և այլն առիւծների սրտերից:

Այլ ևս այսբան խոշոր դէպքերից, եղերեբութիւններից յետոյ՝ վեր կենալ և զանազան յանցաւոր կոմպրոմիսներ և միջին բաղաբաղէտութիւն բռնել, գաւաճանութիւն է: Այլ ևս լուել և թոյլ տալ Մեծ Ոճրագործին, իւր ծածուկ եղեռնագործութիւնները շարունակել բացարձակ ոճիր է: Վիճը պատուուած է, անկարելի է լուել

Թող լուէ մունջը անդամալոյծը,
Կամ որոց բաղքը է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝
Եկ անմախ երեսնք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խենք՝
Ու այնպէս լուենք:

Ս. ՏԱՀԻՐ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՐՑԻ ԶՈՒՐԶԸ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԿԱՐՑԻ ԶՈՒՐԶԸ

Կարծէք նորից կամենումէ արեւելեան չորստանջ հարցը եւրոպական «անվրդով» խաղաղութեան» ճաշանչների մէջ խռովայող ստուէրներ ձգել... Մակեդոնական փոքրամիութիւն ժողովրդի յեղափոխական կոմիտէները ամիսներ շարունակ հերոսաբար կռուեցին իրենց դարաւոր արիւննուշտ թշնամու նոզկալի լուծը թութակելու համար... Ամիսներ շարունակ բազմաչար ժողովրդի արիւնով ոռոգուեցին նրա դաշտերն ու լեռները. տաճկական սովորական գաղանձութիւնները և հրէշաւոր վայրագութիւնները ազատ համարձակ ասպարէզ էին գտել այդ մի բուն աղբի սրտի մէջ՝ յոյս ունենալով անպատիժ մնալ և շարունակել խաղալ եւրոպական դիւանագիտութեան հետ՝ Հայրենիքի Ս. Ազատագրութեան համար մարտնչողներին «աւազակային հրոսակներ» անուանելով: Թէ ի՞նչ կը շահէ Մակեդոնական ազգը այդ անհասարկ կռուից՝ դժուար է այժմանից դրականապէս որոշել, սակայն հանգամանքները, կարծէք այնպէս են բարդուում, որ յուսոյ հետաւոր նշոյլներ կարելի է նշմարել...

Ուղիղ քսան և հինգ տարիներ են անցել այն օրից, երբ տաճիկ կառավարութիւնը Բեռլինի վեհաժողովում խոստացաւ վարչական ուժորմներ - բարենորոգումներ մտցնել Մակեդոնիայում, սակայն մինչև օրս շարունակ խաղացել է եւրոպական Մեծ Պետութիւնների հետ՝ առանց իւր խոստումներն իրագործելու, ինչպէս արել է նոյն բանը 61-րդ յօդուածի նկատմամբ, հայերի համար: Եւ ահա՛ սլաւոնական ագիտատրոնները, Բուլղարիայի Մակեդոնական յեղափոխական կոմիտէները՝ զենքը ձեռքներին կամենումեն, վերջապէս, իրենց բռնաբարուած իրաւունքները վերականգնած տեսնել, իրենց ձայնը լսելի անել, որպէսզի վաղ թէ ուշ եւրոպական «խնամակալ» Մեծ Պետութիւնները վերջի վերջոյ միջամտեն յօգուտ քրիստոնեայ ժողովրդի և տաճկական ատելի տիրապետութեան վախճան տան, ինչպէս մի ժամանակ վախճան տրուեց Բուլղարիայի վերաբերմամբ... Ռուս կառավարութեան մօտ օրերս բաց թողած շրջաբերականը մի շատ պարզ և լուրջ նշան է, թէ Ս. Պետերբուրգում միջամտելու ժամանակը բաւականաչափ մօտեցած են համարում: Մեծ նշանակութիւն են տալիս ռուսաց արտաքին գործերի մինիստրի Բելգորադ, Սոֆիա և Վիեննա այցելելուն, որը, ինչպէս ընդհանրապէս կարծւումէ, նպատակ ունի մի արտակարգ համաձայնութիւն կայացնել Ռուսաստանի և Աւստրիայի միջև: Թէ այս համաձայնութիւնը Եւրոպական Գաշնակցութիւնն էլ այսպէս թէ այնպէս կը շօշափէ, դրա մասին թեր և դեմ կարծիքներ կան: Մի բանի թերթերի կարծիքով

գժուար է ենթադրել՝ թէ այդ այցելութիւնը կապ ունենայ բաղաբական հիմնական հարցերին բացատրութիւն, լուծում տալու հետ: Եթէ երբէք բաղաբական դէպքեր առիթ են տուել վերոյիշեալ այցելութեան, պաշտօնական թերթերը վերագրում են Բալքան թերակղզում կատարուած իրողութիւններին և Մակեդոնիայի քրիստոնեայ ժողովրդներին, որոնց շօշափելու և արծարծելու համար Կոմս Լամպորֆը Վիեննա է գալիս: Սոյն բանն է ակնարկում նաև Ս. Պետերբուրգի Պրափիտելստվեննիյ Վեստնիկը, Կոմս Լամպորֆի այցելութիւնը այս տեսակէտից բացատրելով: Այս հաղորդագրութիւնը շատ տեսակէտներով չէ կարելի առանց ուշագրութեան թողնել: Այստեղ կրկին և շատ խստօրէն վարչական բարենորոգումներ են մատնանիշ արւում Ռուսաստանի կողմից, որոնք պիտի գործադրէ Բ. Գուբը Մակեդոնիայում: Այնուհետև Մակեդոնական կոմիտէների վտանգաւոր ագիտացիան դատապարտւում է, և Բուլղարիայի ու Սերբիայի առջև առանձին լուրջ պահանջներ են դրւում, որպէսզի խռովութիւնները որևէ խրախուսանքի չարժանացնեն:

Վիեննայում Կոմս Լամպորֆը և Գուբըստովսկին, կարծւում է, կաշխատեն միասին գործել երկու պետութիւնների՝ Բալքանեան թերակղզում վերաբերեալ բաղաբականութիւնը առաջ տանելով, մանաւանդ այն դէպքում, երբոր բաւականաչափ յոյս կարելի է ունենալ, որ Տաճկաստանը բարենորոգումներ կը մտցնէ Մակեդոնիայում, և կամ, գարնան բացուելուն պէս, վերստին կըսկսին ասպրտամբութիւն և խռովութիւններ յիշեալ երկրում: Հէնց այժմ Բ. Գուբը սկսել է իւր սովորական աչքակապութիւնները և օյնրագութիւնները, կամենալով ընդհանուր ուշագրութիւնը բարենորոգումներից մի կողմը դարձնել, որովհետև նա արդէն իւրարտասահմանեան ներկայացուցիչների՝ շրջաբերականներ է ուղղել, որոնցով Մակեդոնական շարժումները Բուլղարիայի ինտրիգներին է վերագրւում և պետութիւններին միջամտութեան է հրաւիրւում Սոֆիայում: Հաւանական է որ Գերմանիան էլ, որոշ շահեր աչքի առաջ ունենալով, իւր խորհուրդները տայ Տաճկաստանին, որոնք յամենայն դէպս իրենց ազդեցութիւնը և նշանակութիւնը կուեննան: Կարելի է յուսալ որ դուռը անուշադիր չի թողնել այս խորհուրդները, հակառակ դէպքում կարող են վտանգաւոր բարդութիւններ ծագել, որոնք մի կողմից կը վրդովեն «եւրոպական խաղաղութիւնը», միւս կողմից էլ հաղիւ թէ նպաստաւոր լինին Սուլթան Աբդուլ Համիդի համար, որ ահա քառորդ դար աչքակապուկի է խաղում հանրահաշակ Մեծ Պետութիւնների դիւանագէտների հետ:

Կը շարունակէ նոյն խաղերը և չի կատարի իւր խոստումները՝ այն ժամանակ նորանոր խռովութիւններ, ապստամբութեան բռնկումն, գարնան բացուելուն պէս միտնգամայն անխուսափելի են: Թէև նախկին տարիները երկիւղ էին կրւում սոյն տեսակ ապստամբութիւնների և խռովութիւնների ծագումից, սակայն ներկայումս նոյնիսկ ամենալաւատեսները՝ անհնարին են համարում Վօտակայ Արեւելքում լարուած յարաբերութիւններին մի յուսալից բարեբաժող ապագայ դուշակել: Կոմս Լամպորֆի այցելութիւնը Վիեննա, Սոֆիա և Բելգորադ, Ռուսաց կառավարութեան շրջաբերականի հետ միասին՝ «ժամանակի» մի շատ նշանակալից յայ-

տարար էր և ըստ աւստրիական նշանաւոր քաղաքական «Neue Freie Presse» թերթի կոմս Լամպորֆը և գոլուխովկին կատարեալ համաձայնութեան են եկել, իրերի կարգը Մակեդոնիայում հարկ եղածին պէս պահպանելու վերաբերմամբ: Զիշելու արժանի է նաև այն, որ եւրոպական ամենանշանաւոր լրագիրներն իրենց ամենայաւ թղթակիցներին ամսիս վերջը բաւքանեան պետութիւններն են ուղարկելու: «Zeit» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է իւր թերթին, թէ տաճիկ կառավարութիւնն էլ Մակեդոնիայում խռովութիւններ բռնկուիլը անխուսափելի է համարում, և զինուորական մեծ և ընդարձակածաւալ պատրաստութիւններ է տեսնում: Ի միջի այլոց՝ 30,000 մասնակցական հրաջաններ և մեծ բանակութեամբ պատերազմական միջոցներ է գնել: Ովքեր որ լաւ ծանօթ են բաւքանեան ժողովուրդների և տաճիկ կառավարութեան հետ, պատմումեն, որ ապագայ ապստամբութիւնը այնպիսի բնույթի կոտորածներ, խռովութիւններ պիտի առաջ բերի, որ երբ և է արձանագրած լինի պատմութիւնը:

Զարմանալին այն է, որ տաճիկական անաւթի և խայտառակ պետութիւնը ճգնում է այս բոլոր խռովութիւնները և իւր հրէշաւոր վայրագութիւնները վերագրել Բուլղարիայի լնտրիգներին: Մի ժամանակ ամենամոլորեղ կոտորածներ գործելուց, 300000 անմեղ զոհերով Հայաստանի դաշտերն ու ձորերը ոռոգելուց յետոյ՝ յանցանքը կամեցաւ մի խումբ «խռովարարներին», «սրիկաներին» վրայ ձգել, որոնք առիթ տուին իրեն իւր թշուառ ժողովուրդը հայ «աւագակներին» հրոսակութիւններից պաշտպանել և ակամայ արիւնհեղութիւնների պատճառ դառնալ: Այժմ էլ սկսել է սովորական լիտի պատճառաբանութիւններով իւր եղբունագործութիւնները բողոքել յանդգնել: Ասկայն բաւքանեան թերակղզում կատարուած բոլոր անկարգութիւնների և գաղանալին ոճրագործութիւնների պատասխանատուութիւնը ծանրանում է միմիայն և միմիայն տաճիկ կառավարութեան վրայ, որ իւր ձեռնմերկով, դարաւոր կողպտումներով, բռնաբարութիւններով, անտեսական զարհուրելի գրութեամբ տառապեալ ժողովուրդների անորակելի համբերութիւնը այլ ևս, վերջին ծայրն է հասցըրել: Հարց է ծագում ինքն ըստ ինքեան, արդեօք եւրոպական պետութիւնները՝ ձեռքները ծալած՝ դարձեալ հանդիսատես պիտի լինեն, որ այսպիսի բնույթի վայրագութիւններ կատարուին եւրոպական քրիստոնեայ քաղաքակրթութեան դրան շէմքում, կամ նրանք արդեօք Տաճկաստանին պիտի ստիպեն, որ՝ համաձայն 1878 թ. Բեռլինի դաշնագրութեան՝ Ալբանիայում և Մակեդոնիայում բարենորոգումներ մտցնէ, և եթէ այս չիրականանայ, պիտի վերջապէս, այդ գաղանալին պետութեան հալածեն, վանեն դէպի այն կողմերը, որտեղից նրա խաժամուժ ամբողջ, հրոսակները հեղեղել են Եւրոպան: Հարցը, վերջապէս, պիտի մի լուծում ստանայ, ինչքան էլ պետութիւնները նախանձելիս լինին միմեանց, թէ ո՞վ ստանայ Հիւանդ Մարդու ժառանգութիւնը: Այս նախանձն է ահա, որ տաճիկական նեխեալ պետութիւնը դարբերով պահպանել է վերջնական քայքայումից, կործանումից: Արքան շուտ կատարուի այս կործանումն, որքան շուտ ազատուի Եւրոպան տաճիկական ժանտախ-

տի թարախից, այնքան լաւ, թէ և այս ազատութիւնը կատարուի պողպատի սրբազան օժանդակութեամբ: Այո՛, սրբազան օժանդակութիւնը վաղ ուշ կատարուելու է և Բաւքանեան թերակղզու բոլոր քրիստոնեաներն ազատուելու են Սուլթան Համիդի գաղանալին ճիրաններից... Մնում է որ մի այլ քրիստոնեայ, հայ ժողովրդի փրկչութեան մասին մտածեն գոլուխովկիները և Լամպորֆները, որը հազարապատիկ աւելի հրէշաւոր վայրագութիւնների, կողպտումների, բռնաբարութիւնների և անորակելի կոտորածների է ենթարկուած, սակայն խնամի և ազգական պետութիւններ չունի, որպէսզի իսկոյն և եթ տեղեկագիրներ ուղարկեն և իրենց արդար ձայնը լսելի անեն եւրոպական Մեծ Պետութիւնների բազմազաղ դիւանագէտներին:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կուսակցութեանս կենտ. զանձարանում շնորհակալութեամբ տուացուել են հետեւեալ զուամրանքաւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

ՆԻԻ-ԵՕՐԿԻ Միութեան հանդէսի յանձնախմբի զանձապետից 300 դոլ:

ՄԻԼՔՐԵԴԻ Տնչ. Մասնաժողովից 100 դոլ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Տնչ. Մասնաժողովից 400 յանձնախմբի միջոցաւ մաս մաս անգլ. 66 ոսկի 2 շիւ. 1 փ:

ԲՕՍԹՕՆԻ Խնայողական յանձն. -ից անգլ. 10 ոսկի, 4 շ 1 փ., Եւս հասցնելու համար:

ԼՕՆԴՕՆԻ Տնչ. Մասնաժողովից 10 ոսկի:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻՑ

ԼԵՋԻԱԿ, Ի Տնչ. Մասն. -ից անգլ. 3 ոսկի, 12 շ:

ՍԵԻ....Ի Տնչ. Մասն. -ից 25 ռ. Նուրիւ են Պողոպատ 3 ռ., Զաշան 3 ռ., Դան-Փոլատ 2 ռ., կայծակ 2 ռ., Ղուդո՝ Լուսնեակ՝ Երկաթ՝ հրէշտակ՝ Զուր 1 ռ. 50-ական կ. կրակ՝ ասլան՝ Զալիկ՝ արծիւ՝ արտաւազ՝ աստղ՝ Զար՝ գիշեր 1-ական բուր՝ որից 50 կալ. Մասնաժողովի զանձարանում մնացած է

ԹԵ....ԻՑ Պ. Եւս. Խչ. -ի միջոցաւ 15 ռ. Նուրիւ են՝ արտաշէս՝ Պրոլ՝ արծիւ՝ Ծորար՝ Տրդատ 2 ական ռ.՝ մուսուլապուհ 3 ռ.՝ Լեւոն 1 ռ 50 կալ.:

ԵԱՅԼԱՅԻ Տնչ. Մասնաժողովից 50 ռ. Նուրիւ են Եայլայի սարի գիւղի իւղմը 25 ռ.՝ աներեւոյթ 20 ռ.՝ մարաթսունի 6 ռ.՝ Պուլար 4 ռ.՝ Եղրակ 1 ռ., արծիւ 1 ռ.՝ վարագ 1 ռ.՝ Եարգիս 50 կ.՝ Մանձ-ի զանձարանից 1 ռ.՝ 50 կ.:

ԲՍ, ՆԻՈՐ, ՄՈՒՐՍ, Տ, ԸՆԿԵՐ և Ա, ՐԱ, ԳՍ, Զ Տնչ. Մասնաժողովից 100-ական բուրձի՝ ընդամենը 400 ռ. ուղարկուած Բանուրի միջոցաւ:

ԲՈՒԼԱՐԻՍԻՑ

ՌՈՒՍՃՈՒԳԻ Տնչակեան Մասնաժողովից՝ անգլ 5 ոսկի . 7 շիւ. 6 փ. մի անգլաւ՝ 7 ոսկի 16 շիւ. 9 փ. երկրորդ անգամ

ՌՈՒՍԱՆԻՍՑ

ԲԵՕՍԵՆՁԵԻ Տնչ. Մասնաժողովից 100 Ֆր. մի անգամ 200 Ֆր. երկրորդ անգամ:

Տեղի սղութեան պատճառաւ «Բանուրի», «Արագածի», «Լեւոնիայի», «Կաւահանգստի» «Վառնայի», և որիշ Մասնաժողովի զանձարանների հաշուհիշուները կը կուպենը հետեւեալ համարում:

Հօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ, դրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —

M. Bellart 85 Peckham Rye

London S. E. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀԵՉԱԿ»

ԼՕՆԴՕՆ